

ՖՐԱՆՍԱՅԻ ՎԱԳՐԸ (ՎԼԷՄԱՆՍՕ ԵՒ ՀԱՅՎԱԿԱՆ ԴԱՏԸ)

Գրեց՝ Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Մարդը եւ իր պաշտամունքը.— Հայրենիք եւ ազատութիւն.— Երիտասարդ կիւմանսօն խորհրդարանի մէջ.— Դահլիճներու խարազան եւ ժողովրդի ասպետ.— Հրապարակագիրը.— Դրէյֆուսեան դատ.— կիւմանսօ եւ ժօնէս.— Մեծ պատերազմի օրերուն.— Նախախնամական մարդը.— կիւմանսօ եւ Պուսիֆաուէ.— Յաղթանակը.— Փառքի գագաթներուն.— Սայրաֆուսներ եւ դառն նուաստացում.— Նորէն մեկուսացած.— կիւմանսօ եւ հայկական դատը.— «Օրօր»ի փաղանգը.— Քիչեաւ, Իւրբէն Գօհիլ, Պրէսանսէ.— Սուլթանական սպանակիւմներ.— «Պրօ Արմէնիա» եւ կիւմանսօյի յողուածը.— Զինադադարէն յետոյ.— Խաղաղութեան վեհաժողովի նախագահը եւ անոր դիրքը հայոց հանդէպ.— Վարկածներ եւ կռահումներ.— կիւմանսօյի նրաժարականէն վերջ.—

Իր ալեծուսի կեանքի շրջանը փակեց գոռոզ, սասանեցուցիչ հրաժեշտով մը: Շէքսպիրեան հերոսին պէս (Տիմոն Աթենացիի) ցասումով մեկնեցաւ իր հայրենակիցներէն, որոնք դուցէ ըստ արժանւոյն չզնահատեցին իր հանձարը:

Եւ ողջ քաղաքակիրթ մարդկութիւնն ըզգաց, որ անսովոր մարդ մը գերեզման իջաւ, տարօրինակ մարդ մը — գուցէ ամենէն տարօրինակը Փրանսայի եւ աշխարհի պետական մարդոց շարանին մէջ... Առաքինութիւններու եւ արատներու շիօթ մը, հակասութիւններու հիւսուածք մը: Մի մարդ՝ որ ճաշակեց ամենէն գինովուցիչ փառքերը եւ ամենէն զգայացունց նուաստացումները...

Երբեմն գրչի ու խօսքի այնպիսի սայթաքումներ կ'ունենար, կոպտութեան, վայրենութեան այնքան տխուր բռնկումներ, որ կարծէք փողոցէն կուգար, կը ձուլուէր հասարակական տականքներուն հետ, կը յայտնուէր քաղաքակիրթութեան լերան ստորոտներուն,

արհամարհուած եւ հալածական: Երբեմն ալ թեւեր կ'առնէր, կը բարձրանար լերան գագաթները եւ մարդկայնութեան պերճ ու վսեմ բարբառով կը զմայլացնէր ամենէն մոլի հակառակորդները:

Երբեմն կարծէք քմայքի ու չարութեան մարմնացումն էր, անգութ, քարասիրտ մէկը, որ կը խայթէր, կը քանդէր ու կը տրորէր՝ լուկ զուարճանալու եւ հրապարակը զուարճացնելու համար. երբեմն ալ կը մատնէր գերզգայուն, քնարական, ոռոմանտիկ հոգի մը, ըմբոստ ու անողոք ընդդէմ բռնութեան ու անիրաւութեան եւ խորապէս կարեկից մարդկային թշուառութիւններու հանդէպ:

Ժանիքաւոր, ահարկու «Վագրն» էր, որ 88-րդ տարւոյն մէջ անգամ՝ չէր կորսնցներ իր չնաշխարհիկ երիտասարդութիւնը: Շատեր կ'ատէին, ոմանք կը գարչէին, ամէնքը կը վախնային...

Եւ երկար ատեն, առասպելի պէս, այս համոզումը կը պտըտէր Փրանսայի եւ աշխարհի մէջ, թէ նա բացասական, քանդիչ ու վնասակար հանձար մըն է, գոր պէտք է հեռացնել հանրային գործունէութեան բոլոր մարդերէն: Բայց օր մըն ալ — 1917-ի ողբերգական օրերուն — նա մէկէն ի մէկ դարձաւ Փրանսական հայրենիքի եւ ողջ աշխարհի ուշադրութեան առանցքը, երբ իբրեւ վարչապետ, իր ձեռքն առաւ ազգային համերաշխութեան շեփորը, հնչեցուց գոռ ահազանդ մը, դարբնեց կուռ, միաձոյլ Փրանսական բանակը — որու մէջ զարհուրելի աւերածներ գործեր էր բարոյալքումի մահաբեր որդը — եւ քչեց զայն դէպի յաղթանակ... Մեծագոյն յաղթանակը մարդկային պատմութեան մեծագոյն պատերազմին մէջ:

Ռորեսպիէն մըն էր — դարձաւ Դանտօն: Ինչ մը կանգ առնենք այդ արտակարգ անձնաւորութեան վրայ, եւս առաւել՝ որ անոր